«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

1 Հուլիսի 2022, N 13 - 6

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով 2022-2023 ուսումնական տարում համալսարանի մագիստրոսական կրթական ծրագրերով ակադեմիական խմբերի ձևավորման ժամանակավոր նորմատիվներ և ակադեմիական կազմի ներգրավման սկզբունքներ սահմանելու մասին հարցը, **արձանագրելով**, որ 2018-2019 ուսումնական տարում ավագ դպրոցների շրջանավարտների շուրջ 50%-ով կրճատվելու հետևանքով համալսարանի բակալավրական կրթական ծրագրերը առկա ուսուցման համակարգում թերհամալրված են եղել շուրջ 58%-ով, իսկ հեռակա կրթաձևում՝ 65%-ով, **հաշվի առնելով** համալսարանի առկա և հեռակա կրթական ծրագրերի ուսանողների մագիստրատուրայում մասնագիտական կողմնորոշմանը չխոչընդոտելու և համալսարանի կրթական ծրագրերի շարունակականությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է**.

1. Միայն 2022-2023 ուսումնական տարում թույլատրել մագիստրոսական կրթական ծրագրերի ակադեմիական խմբերը ձևավորել նվազագույնը 5 ուսանողով (10 ուսանողի փոխարեն):
2. 5-9 ուսանողներով ձևավորված կրթական ծրագրերի մատուցման համար ակադեմիական կազմին ներգրավել բացառապես ժամավճարի հիմունքներով (ներառյալ համալսարանի հիմնական ակադեմիական կազմը), իսկ վարձատրությունն իրականացնել ժամավճարի համար սահմանված նորմատիվներով:
3. 10 և ավելի ուսանողներով ձևավորված կրթական ծրագրերի ուսումնական բեռնվածությունը ներառել ամբիոնների ակադեմիական կազմի անհատական բեռնվածության մեջ:
4. Սույն որոշման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դիանա Գալոյան**

2022 թ. հուլիսի 1
Երևան